ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 97

«27» 08 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 87 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Դադարեցնել Դավիթ Մելքոնյանի նախագահությունը Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհրդի կազմում:

2. Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհրդի նախագահ նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանին:

3. Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհրդի անդամներ նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ Արթուր Զախոյանին և իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ Դավիթ Մելքոնյանին:

4. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհրդի կազմը հաստատելու մասին» N 87 հրամանի 1-ին կետում՝

1) «**Դավիթ Մելքոնյան** - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ),»

պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Գևորգ Բաղդասարյան** - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ),»

2) «**Գևորգ Բաղդասարյան** - Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու,»

պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Արթուր Զախոյան** - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,»

3) լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ

«**Դավիթ Մելքոնյան** - իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)»:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

7. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ